Նոտարական ակտի կոդ: 769-20180601-37-2575819
Նոտարական ակտի գաղտնագիր: Z2J9P5

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Երկու հազար տասնութ թվականի հունիսի մեկին
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

Մենք՝ «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս.ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը /ՓԲԸ/, ՀՎՀՀ՝ 00011624, Գրանցման համար՝ 264.140.01712, Հասցե՝ ԱՐԱԲԿԻՐ ԿՈՄԻՏԱՍԻ Պ. / 49/4շ, ի դեմս տնօրեն Ալեքսանդր Ալեքսանդրի Բազարչյանի, որի անունից թիվ 1-243/9 լիազորագրով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԼԻԼԻԹ ԱՐՄԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**, ծնված՝ 09/08/1993թ-ին, ՀԾՀ՝ 5908930105, անձնագիր՝ AK0448887, տրված՝ 016-ի կողմից, 23/02/2010թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, Հ. ԳՅՈՒԼԻՔԵՎԽՅԱՆ Փ., 29 Շ, 2ԲՆ հասցեում, /լիազորագիր N1-243/9, վավերացված՝ 31/05/2018թ. /երեսունմեկը մայիսի երկու հազար տասնութ թվականին/ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից /, հետագայում՝ <<Վարձատու>> և «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ, ՀՎՀՀ՝ 02551144, Գրանցման համար՝ 286.180.06275, Հասցե՝ ԱՐԱԲԿԻՐ ԿՈՄԻՏԱՍԻ Պ. / 49/4, ի դեմս հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արայիկ Բաղրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, որի անունից թիվ 70-ԱԾԻԳ լիազորագրով հանդես է գալիս հիմնարկի իրավաբան Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ՄԱՐԻԱ ՍԵՄՅՈՆԻ ԱՂԱՋԱՆՈՎԱՆ**, ծնված՝ 25/01/1983թ-ին, ՀԾՀ՝ 7501830398, անձնագիր՝ AK0319250, տրված՝ 008-ի կողմից, 19/06/2009թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ., 21 Շ, 21ԲՆ հասցեում, /լիազորագիր վավերացված՝ 29/05/2018թ. /քսանինը մայիս երկու հազար տասնութ թվականին/ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից, հետագայում՝ <<Վարձակալ>>, իսկ միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցինք սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2 կետում նշված գույքը, իսկ Վարձակալը պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:
1.2Վարձատուն Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում քաղաք Երևան, Արաբկիր համայնք, Կոմիտաս փողոց թիվ 49/4 /քառասունինը կոտորակ չորս/ հասցեում գտնվող անշարժ գույքից՝ ըստ հատակագծի 5 /հինգերորդ/ հարկն ամբողջությամբ, ընդհանուր՝ 419.4 /չորս հարյուր տասնինը ամբողջ չորս տասնորդական/ ք.մ. տարածք, այսուհետ՝ Անշարժ գույք:
Ամբողջ անշարժ գույքը բաղկացած է՝ 8236.3 /ութ հազար երկու հարյուր երեսունվեց ամբողջ երեք տասնորդական/ քմ պետական սեփականություն հանդիսացող շենքից /նպատակային նշանակությունը՝ հասարակական, օգտագործման նպատակը՝ ինստիտուտ/, 120.75 /մեկ հարյուր քսան ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական/ քմ ավտոտնակից, 15.10 /տասնհինգ ամբողջ մեկ տասնորդական/ քմ ավտոտնակից, 15.1 /տասնհինգ ամբողջ մեկ տասնորդական/ քմ ավտոտնակից, և 16 /տասնվեց/ քմ շինությունից, որոնք գտնվում են 0.25825 /զրո ամբողջ քսանհինգ հազար ութ հարյուր քսանհինգ / հա վարձակալության իրավունքով Վարձատուին պատկանող հողամասի վրա, այսուհետ՝<<Գույք>>:
1.3 Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման կողմից 09.01.2002թ. /ինը հունվարի երկու հազար երկու թվականին/ տրված տրված թիվ 494478 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի և նշված անշարժ գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ առկա չեն, որը հաստատված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ստորաբաժանման <<ԱՐԱԲԿԻՐ>> *2* սպասարկման գրասենյակի

կողմից 21.05.2018թ. /քսանմեկը մայիսի երկու հազար տասնութ թվականին/ 10:09 դրությամբ տրված N ՍՏ-21052018-01-0122 (գաղտնաբառ՝CI9TMRJYVLAJ) միասնական տեղեկանքով, շինության ծածկագիրը՝01-003-0214-0209-001-001, հողամասի ծածկագիրը՝01-003-0214-0209: Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ՝8403.35քմ շինությունների մակերեսը-իր մեջ ներառում է 8236.3քմ ինստիտուտի շենք,150.95քմ ավտոտնակներ և 16.0քմ շինություն: Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում կկատարվի Երևանի քաղաքապետի կողմից տրված ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու դեպքում: Ծածկագրերը համապատասխանեցված են ներկայումս գործող կարգին:Գույքի օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման համաձայն փոստային հասցե ներկայացնելու դեպքում:

1.4 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման օրվանից, տարածվում է կողմերի միջև 01/01/2018թ. /մեկը հունվարի երկու հազար տասնութ թվականից/ ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 31/12/2019թ. /երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի երեսունմեկը/: Վարձակալության ժամկետը լրանալուց հետո Պայմանագիրը համարվելու է անորոշ ժամկետով կնքված: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ լուծման մասին մյուս կողմին 2 /երկու/ ամիս առաջ ծանուցելու պայմանով:

1.5Վարձավճարի չափը յուրաքանչյուր ամսվա համար կազմում է՝ 79,000 /յոթանասունինը հազար/ ՀՀ դրամ, ներառյալ բոլոր հարկերը:

1.6 Ամսական վճարը յուրաքանչյուր ամսվա համար Վարձատուն կատարում է մինչև հաջորդ ամսվա 05-ը /հինգը/՝ փոխանցելով Վարձատուին:

1.7 Սույն պայմանագրի կնքման հետ կապված պետական տուրքի և նոտարական ծառայության վճարումը կատարվում է Կողմերի կողմից:

1.8 Վարձատուն գույքը հանձնել է Վարձակալին 01.01.2018թ. /երկու հազար տասնութ թվականի հունվարի մեկին/:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

Վարձատուն իրավունք ունի՝

2.1 Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.2 Վարձակալից պահանջել Գույքը պահել սարքին և պատշաճ վիճակում և վերադարձնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում՝ հաշվի առնելով բնական մաշվածությունը:

Վարձատուն պարտավոր է՝

2.3 Գույքը տրվում է վարձակալին իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

2.4 Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում և դրա բոլոր պատկանելիքներով ու իրեն վերաբերող փաստաթղթերով:

2.5 Վարձակալին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին:

2.6 Վարձակալին զգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավ, սերվիտուտ և այլն) մասին:

Վարձակալը իրավունք ունի՝

2.7 Գույքը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնությամբ:

Վարձակալը պարտավոր է՝

2.8 Վճարել Վարձակալի կողմից օգտագործած էլեկտրաէներգիայի, ջրի, գազի ծախսերը:

2.9 Գույքը պահպանել սարքին վիճակում և օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.10 Կատարել Գույքի ընթացիկ վերանորոգումը Վարձատուի համաձայնությամբ:

2.11 Գույքը վերադարձնել Վարձատուին՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում:

Սույն պայմանագիրը կնքված է 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 /երեսուն /աշխատանքային օրվա ընթացքում:

Ընթերցելով սույն պայմանագիրը մենք լիովին հասկանում և ընդունում ենք կնքվող պայմանագրի իմաստն ու նշանակությունը իսկ դրանից բխող իրավական և գույքային հետևանքները մեզ ձեռնտու են: Պայմանագիրը ստորագրում ենք մեր կամքի ազատ արտահայտությամբ :

<<Վարձատու>>

<<Վարձակալ>>

Ա. Մանուչարյան

Երկու հազար տասնութ թվականի հունիսի մեկին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ ,,Երևան,, նոտարական տարածքի նոտար Նաիրա Ռաֆայելի Մանուչարյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը և գործունակությունը ստուգված է, իրավաբանական անձի իրավունակությունը պարզված, անշարժ գույքի սեփականությունը ստուգված: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է գրանցամատյան 3333

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Նաիրա Ռաֆայելի Մանուչարյան

ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՀԱՍՑԵՆ ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈՂ. № 49/4

„ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ"



V - ՀԱՐԿ

ԲԱԺՆԻ ՊԵՏ Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ